

Ֆինանսական միջնորդների շրջանակ - Արևելյան գործընկերության «ՓՄՁ-ների մրցունակության բարձրացման ծրագիր» – «Կոնվերս Բանկ»

Երկիրը՝
Հայաստան

Ծրագրի համարը՝
55803

Բիզնես ոլորտը՝
Ֆինանսական հաստատություն

Պետական/մասնավոր՝
Մասնավոր

Բնապահականական կատեգորիա՝
Ֆինանսական հաստատություն (ՖՀ)

Հաստատման ամսաթիվ՝
5 նոյեմբերի 2024թ.

Կարգավիճակը՝
Հաստատված է

Ծրագրի ամփոփ փաստաթղթի
անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը՝
10 դեկտեմբերի 2024թ.

Տեղեկատվության հասանելիության մասին դիրեկտիվի 1.4.2 (iii) բաժնի համաձայն՝ «Բանկի ղեկավարության կողմից հաստատված ծրագրերի համար, որոնց հետ կապված Տնօրենների խորհուրդը պատվիրակել է հաստատման լիազորությունը, Ծրագրի ամփոփ փաստաթուղթը պետք է բացահայտվի «առարկություններ չկան» համապատասխան ծանուցման ժամկետի սկզբում Բանկի անդամ հանդիսացող երկրին՝ համաձայն ՎՁԵԲ-ի հիմնադրման մասին համաձայնագրի 13-րդ հոդվածի (iii) կետի:»

Ծրագրի նկարագրությունը

Մինչև 5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առաջնային վարկի տրամադրում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին («ԿԲ») ՎՁԵԲ-ի կողմից՝ Եվրոպական միության (ԵՄ) հետ

համագործակցությամբ, ստեղծված Արևելյան գործընկերության երկրներում ՓՄՁ մրցունակության բարձրացման ծրագրի (ԱԳ ՓՄՁՄԲ) շրջանակում՝ պահանջներին համապատասխանող միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման համար:

Ծրագրի նպատակները

Ծրագիրը ԿԲ-ին հնարավորություն կտա ֆինանսավորել արտադրական հզորությունների և գործընթացների արդիականացման ուղղված Հայաստանի ՄՓՄՁ-ների երկարաժամկետ ներդրումները՝ ԵՄ չափանիշների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով, ներառյալ ներդրումները կայուն և կանաչ տեխնոլոգիաներում՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանի ՄՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը Եվրոպայի և ներքին շուկաներում: Բացի երկարաժամկետ ֆինանսավորումից, պահանջներին համապատասխանող ենթավարկառուները կստանան ներդրումային խթաններ՝ իրենց ներդրումային ծրագրերի հաջող ավարտից հետո: Ակնկալվում է, որ բոլոր ֆինանսավորվող ենթավարկերի առնվազն 70 տոկոսը կհամապատասխանի ՎՁԵԲ-ի՝ Անցումը կանաչ տնտեսությանը (GET) մոտեցմանը:

Ծրագիրը կներառի նաև Հայաստանի **Փախստականների կարիքների աճագանքման ծրագիրը (ՓԿԱԾ)**, որը նախատեսված և նախագծված է լուծելու այն խնդիրները, որոնց բախվում են հատկապես տեղահանվածները, ինչպես նաև ընդունող համայնքների ՄՓՄՁ-ները: Բացի ՓՄՁ մրցունակության բարձրացման ծրագրի ներդրումային խթանների, ՓԿԱԾ-ն կառաջարկի ավելի մեծ խթաններ թերսպասարկվող, սակայն ֆինանսապես ապահով, փախստականներին և ընդունող համայնքների ՄՓՄՁ-ներին՝ փախստականներին իրենց աշխատավայր ինտեգրելու և որպես աշխատուժ տեղավորելու համար:

Ազդեցությունն անցումային գործընթացի վրա

Անցումային գործընթացի վրա ակնկալվող ազդեցության (ETI) ցուցանիշ՝ 75

Մրցունակ. ԿԲ-ն կընդլայնի իր ՄՓՄՁ վարկային պորտֆելը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԵՄ դիրեկտիվ(ներ)ին համապատասխանող առաջնահերթ ներդրումների ֆինանսավորմանը, ինչն ի վերջո նպաստելու է Հայաստանի ՄՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը:

Կայուն. ակնկալվում է, որ ԿԲ-ն կպահպանի վարկային պորտֆելի բարձր որակ:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն առևտրային բանկ է, որը ծառայություններ է մատուցում ֆիզիկական և իրավաբանական անձանց Հայաստանում:

Հայաստանի 18 բանկերի շարքում այն զբաղեցնում է 6-րդ տեղը իր ընդհանուր ակտիվներով և 7-րդ տեղը՝ վարկային պորտֆելով՝ համապատասխանաբար 5.5% և 5.4% շուկայի մասնաբաժիններով 2023թ. վերջի դրությամբ:

ՎՇԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

5,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեքը

5,000,000.00 ԱՄՆ դոլար

Հավելյալություն

Ֆինանսավորման կառուցվածքը. ՎՇԵԲ-ն առաջարկում է տեղական արժույթով ֆինանսավորում շուկայում ոչ միշտ հասանելի պայմաններով: ՎՇԵԲ-ն առաջարկում է շուկայում առաջարկվող միջինից ավելի երկար ժամկետով ֆինանսավորում, որն անհրաժեշտ է ծրագրի իրականացման համար:

Ֆինանսավորման նորարարական կառուցվածքներ և/կամ գործիքներ. ՎՇԵԲ-ն առաջարկում է նորարարական կանաչ ֆինանսավորման գործիք, որը ֆինանսավորման կառուցվածքում ինտեգրում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են կլիմայական և բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ստանդարտները և/կամ կլիմայական և ԲՍԿ ռիսկերը: Օրինակ՝ վարկի տոկոսը և/կամ արտոնյալ պայմանները ճշգրտվում են՝ կլիմայական ռիսկի մակարդակը և/կամ կլիմայի փոփոխության դրական ազդեցությունը (օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը և կլիմայի փոփոխությանը դիմակայության բարձրացումը) արտացոլելու համար:

Գիտելիքներ, նորարարություն և կարողությունների զարգացում. ՎՇԵԲ-ը տրամադրում է փորձ, նորարարություն, գիտելիքներ և/կամ կարողություններ, որոնք էական նշանակություն ունեն ծրագրի նպատակները ժամանակին իրականացնելու համար՝ տրամադրելով նաև աջակցություն ԿԲ-ի կարողությունների ամրապնդման գործում:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ), 2019թ.): ԿԲ-ն ՎՇԵԲ-ի գործող հաճախորդ է և առկա վարկային պարտավորությունների շրջանակում գործում է բնապահպանական և

սոցիալական (ԲՍ) պահանջներին համապատասխան: ԿԲ-ն պետք է ապահովի բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարման համակարգ՝ իր կողմից ֆինանսավորվող ենթաձրագրերի հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունը գնահատելու, կառավարելու և մշտադիտարկելու համար: ԿԲ-ից պահանջվում է շարունակել համապատասխանել ՎՁԵԲ-ի Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին (ԳԴ-ներ) և շարունակել կիրառել ՎՁԵԲ-ի ԲՍ ռիսկերի կառավարման համապատասխան ուղեցույցը, այդ թվում՝ ՎՁԵԲ-ի ԲՍ բացառման և ուղղորդիչ ցանկը և Բանկին ներկայացնել տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ: ԿԲ-ի վարկի միջոցով ֆինանսավորվող ենթավարկառուներից կպահանջվի համապատասխանել շրջակա միջավայրի պահպանության, առողջության, անվտանգության և աշխատանքի պաշտպանության ազգային պահանջներին:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Ծրագիրը ներառում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համապարփակ տեխնիկական աջակցություն: Տեխնիկական աջակցության նպատակն է աջակցել Հայաստանի ֆինանսական միջնորդներին, այդ թվում՝ ԿԲ-ին, ծրագրի հաջող իրականացման գործընթացում, ներառյալ շուկայավարման, ենթաձրագրերի՝ ֆինանսավորումից առաջ և ֆինանսավորումից հետո գնահատման, ինչպես նաև ընդհանուր մշտադիտարկման և հաշվետվողականության հետ կապված հարցերում: Բացի այդ, ԿԲ-ի ենթավարկառուները կստանան նաև ԵՄ կողմից ֆինանսավորվող ՏԱ՝ փոքր բիզնեսի հետ կապված խորհրդատվություն տրամադրող խմբի կողմից:

Բացի այդ, վարկը համալրվելու է ԵՄ կողմից տրամադրվող 0.3 միլիոն եվրո դրամաշնորհով, որը կհատկացվի պահանջներին համապատասխանող ենթավարկառուներին ներդրումային խթանների տեսքով՝ խրախուսելու համար ԵՄ ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիաներում, այդ թվում՝ կայուն և կանաչ տեխնոլոգիաներում կատարվող ներդրումները:

Ավելին, ՓԿԱԾ-ը հնարավորություն է տալիս Էլ ավելի ընդլայնել ԱԳ ՓՄՁՄԲ ներդրումային խթանները՝ առաջարկելով ավելի մեծ աջակցություն այն ենթավարկառուներին, որոնք համապատասխանում են ՓՄՁՄԲ ծրագրի պահանջներին՝ միևնույն ժամանակ բավարարելով ՓԿԱԾ-ի լրացուցիչ չափանիշները: ՓԿԱԾ-ի հատուկ ներդրումային խթանների գնահատված ծավալը կկազմի 0.6 միլիոն եվրո, որը կֆինանսավորվի ՎՁԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամի (ԲՀՀ) կողմից:

Ընկերության կոնտակտային տվյալները

Լուսինե Բալանյան
lusine.balanyan@conversebank.am
 +374 10 511 211 ներքին 2335

<https://www.conversebank.am>

ՀՀ, Երևան 0010, 26/1 Վ. Սարգսյան փող.

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՁԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՁԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՁԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՁԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՁԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-

ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՁԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎՁԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍԶ](#)-ում: